# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պտղնի, (0222) 69070, (0222) 69080, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2014թվականի N 16

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջների՝ *ավագանին որոշում է.*

1. Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 6 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1) Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 09-ի N 45-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2014 թվականի հունիսի 10-ի N 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

2) Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 09-ի N 43 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3) Համայնքի վարչական սահմաններում գտնվող հատուկ պահպանվող տարածքների հողերից 0.009 հա տարածքը հեռուստակայան կառուցելու համար Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> փակ բաժնետիրական ընկերությանը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ
2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱԾՈՏ
3. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՄԻԱՄՆԻԿ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՊԻՆ
7. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պտղնի, (0222) 69070, (0222) 69080, ptghni.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2014թվականի N 17-Ն

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 15-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածների պահանջների՝ *ավագանին որոշում է.*

1. Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 09-ի «Պտղնի համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 45-Ն որոշմամբ հաստատված հավելվածի ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հատված 6-ի 2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «5113 Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տողի «1440.8» թիվը փոխարինել «0.0» թվով:

2) հատված 6-ի 2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «5121 Տրանսպորտային սարքավորումներ» տողի «500.0» թիվը փոխարինել «0.0» թվով:

3) հատված 6-ի 2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «5122 Վարչական սարքավորումներ» տողի «1500.0» թիվը փոխարինել «800.0» թվով:

4) հատված 6-ի 2641 տողի 06 բաժին 4 խումբ 1 դաս «5113 Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տողի «800.0» թիվը փոխարինել «0.0» թվով:

5) հատված 6-ի 2451 տողի 04 բաժին 5 խումբ 1 դաս «5113 Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տողի «0.0» թիվը փոխարինել «3200.0» թվով:

6) հատված 6-ի 2451 տողի 04 բաժին 5 խումբ 1 դաս «5134 Նախագծահետազոտական ծախսեր» տողի «0.0» թիվը փոխարինել «240.8» թվով:

2. Ուժը կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 10-ի <<Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 09-ի N 45-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> N 15-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ

2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՇՈՏ

3. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ

4. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՄԻԱՄՆԻԿ

6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՊԻՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** <u>ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պտղնի, (0222) 69070, (0222) 69080, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2014թվականի N 18

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 43 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 09-ի «2014 թվականի Պտղնիի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 43 որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ
2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՇՈՏ
3. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՄԻԱՄՆԻԿ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՊԻՆ
7. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Կոտայքի մարզի Պտղնի
համայնքի ավագանու 2014 թվականի
հունիսի 24-ի N 18 որոշման

# ՊՏՂՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12:
2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԻ ՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 205 800 | 205 800 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 143 000 | 143 000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 150 000 | 150 000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 3 | 132 000 | 396 000 |
| 3 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 97 000 | 194 000 |
| 4 | Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 74 000 | 74 000 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | |
| 1 | Վարորդ | 1 | 74 000 | 74 000 |
| 2 | Հավաքարար | 1 | 74 000 | 74 000 |
| 3 | Կոմունալ սպասարկման բանվոր | 1 | 74 000 | 74 000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 12 | 1 023 800 | 1 384 800 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՎԻՐԱԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պտղնի, (0222) 69070, (0222) 69080, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2014թվականի N 19

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 0.009 ՀԱ ՏԱՐԱԾՔԸ ՀԵՌՈՒՍՏԱԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածի պահանջների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի պահանջները և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Հ. Պողոսյանի համաձայնությունը հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականի հունիսի 10-ի N 32-422 գրությունը ինչպես նաև, այն հանգամանքը, որ նշված հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում *ավագանին որոշում է.*

1. Պտղնի համայնքի վարչական սահմաններում գտնվող հատուկ պահպանվող տարածքների հողերից՝ ըստ գործառնական նշանակության պատմական և մշակութային, 07-054-0308-0041 ծածկագրով 0.009 հա տարածքը 99 տարի ժամկետով, տարեկան 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ վարձավճարով, կառուցապատման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությանը հեռուստակայան կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ
2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՇՈՏ
3. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՄԻԱՄՆԻԿ

6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՊԻՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ